

7439

C1926.17580

ԹԵ ԻՆՉՊԵՍ ԿԱՐԵԼԻ ՅԵ

# ԳՅՈՒՂՈՒՄ

ԵԼԵՔՏՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՆՑԿԱՑՆԵԼ



ԱՅՍ ԺՈՂՈՎՐԴՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՀՐԱՄԱԿԱԳՈՒԹՅՈՒՆ  
ՈՍԿԵԱ

621.31

4-83

1926

17926.1360

Ա. ԿՐԱՎՀԵՆԿՈ

621-31

4-83

30 JUL 2010

1793  
ՍԱ 1406  
ԲԻBLIOGRAPHY  
INSTITUTE  
OF ECONOMICS  
ACADEMY OF SCIENCES  
OF THE USSR

ԹԵ ԻՆ ՀՎԵՍ ԿԱՐԵԼԻ ՅԵ  
ԳՅՈՒՂՈՒՄ  
ԵԼԵՔՏՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ  
ԱՆՑԱՑՆԵԼ.



Խ.Ա.Հ.Մ. ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԿԵՆՏՐ.  
ՀՐԱՄԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
ՄՈՍԿՎԱ 1926

ՀՀ-18735

23 MAY 2013

11115



Напечатано в типогр. Госиздата  
„Красный Пролетарий“  
Москва, Пименовская  
ул., д. № 16, в коли-  
честве 5000 экз.  
Главлит  
№ 54297.



56591-66

ԳԵՂԱՆԱԿՆՁՈՐՈՎ ՀԱՐՈՒՏԱՑ Գ.Ա.Վ.Ա.ՌԱԿՈՅ,

Շունգեն փոքրիկ գավառակը գտնվում է  
Կաստրամայի նահանգում, Վոլգա գետի ափին:

1905 թվին այդ գավառակն ուներ 11,845  
բնակիչ, իսկ հիմա՝ մի քիչ ավելի:

Գավառակը սակավահող է, չնչին հասնում է  
քառորդ գեսայատինից պակաս վարելահող և մոտ  
յերեք քառորդ գեսայատին խոտհարք:

Հողը վատ է, ավագոտ, այդ պատճառով ել  
բերքից քիչ հացահատիկ է ստացվում։ Այստեղ  
լավ է գնում գետնախնձորի (կարտոֆիլի) մշա-  
կությունը, դրա համար ել շունգենցիները գետ-  
նախնձորի համար ավելի շատ հող են հատկա-  
ցնում, քան թե հացահատիկների մշակությանը։

Բայց հում գետնախնձորը եժան մթերք է,  
մոտերքում ել դրա համար չկան մեծ շուկաներ,  
վորտեղ կարելի լինի ծախել ստացված բերքը,  
իսկ հեռու տեղ տանել—ձեռնտու չե։ Դուրս ե  
գալիս, վոր լավ բերքի գեղքում ել գյուղացին  
քիչ ոգուտ ե ստանում։

Բայց գետնախնձորից կարելի յե կրախմալ

պատրաստել, իսկ կրախմալից՝ շարապ. այս նյութը նույնպես անհրաժեշտ է ուրիշ բաներ արտադրելու համար:

Յեվ ահա տեղական հարուստները, զորբաներն ու քաղաքի վաճառականները սկսեցին այդ գավառակում գետնախնձոր-քերող փոքրիկ գործարաններ սարքել: Գետնախնձորը եժան գնով գնում եյին գյուղացիներից, տեղն ու տեղը կրախմալ պատրաստում և այսպիսով մեծ ոգուտ ստանում:

Յեվ վորովհետև այդ մանր գործարանատերերը քիչ եյին, դրա համար ել նրանք հեշտությամբ խոսքերը մեկ եյին անում և պակաս վճարով գյուղացիներից գնում գետնախնձորը:

Ահա այսպես, գյուղացիք մեծ կախման մեջ եյին նրանցից:

### ՄԻՈՒԹՅԱՆ ՄԵջ Ե ՈՒԺԸ.

Յերկար ժամանակ շունգենցիները վոչինչ չեյին կարողանում անել, և միայն տեմնում եյին, թե ինչպես այդ մանր գործարանատերերը հարստանում եյին ուրիշների արյան-քրտինքի արդյունքները յուրացնելով: Այսպես շարունակվեց, մինչև վոր նրանք դտան այդ դրությունից դուրս գալու միջոցը:

Այդ յելքը—կոռպերացիան եր:

1904 թվին Սամես գյուղում գյուղացիները կազմակերպեցին Շունգենի գավառակում առաջին «գյուղատնտեսական ընկերությունը»:

Այս ընկերությունը հաջող կերպով սկսեց իր անդամներին յերկրագործական գործիքներ հայթնայթել, քաղաքում գյուղացիների համար անհրաժեշտ ապրանքներ գնել և նրանց մթերքները այնտեղ լավ գնով ծախել:

Այսպիսով գյուղացիք գործնականում տեսան կոռպերացիայի տված ոգուտը:

1907 թվին Շունգ գյուղում բացվեց գավառակային վարկային ընկերություն, և գյուղացիությունն սկսեց ազատվել այդ զորբաների լծից:

Բայց վորպեսզի նրանք ազատվեյին այդ գործարանատերերի շահագործումից, պետք եր, վոր գետնախնձորի մշակման գործը իրենց ձեռքը վերցնեյին:

Յեվ ահա, դրանից յերկու տարի հետո, գյուղացիք մի կերպ հիմնում են «Շունգենի բաժնետիրական ընկերությունը», վորը, վարկային ընկերության դրամական աջակցությամբ, հենց նույն տարում հիմնում ե ու գործի գնում գետնախնձոր-քերող առաջին կոռպերատիվ գործարանը:

Մինչ այդ, գավառակում կային գետնախըն-  
ձոր-քերող 11 մասնավոր գործարաններ:

Առաջին կոռպերատիվ գործարանի բացումով  
մասնավոր մանր - գործարանատերերի գործնե-  
յությանը մեծ վաս հասցըվեց, վորովհետև գյու-  
ղացիք իրենց գետնախնձորը սկսեցին տալ իրենց  
գործարանին:

Մասնավոր գործարանատերերը հետզհետե  
դադարեցրին իրենց աշխատանքները և մեծ մա-  
սամբ ձեռնտու գներով վաճառեցին գյուղական  
գյուղատնտեսական արտելներին, վորոնք կազ-  
մակերպվում եյին՝ մեկը մյուսի յետեկից:

1912 թվին գավառակում գոյություն ունե-  
ցող կոռպերատիվ 4 կազմակերպությունները  
կազմեցին Շունգենի կոռպերատիվների Միու-  
թյունը, վորը հենց այդ ժամանակ մի կոտր ըն-  
կած վաճառականից ձեռք բերեց գավառի ամե-  
նախոշը գետնախնձոր-իերող գործարանը և սղո-  
ցարանը:

Գավառակի զանազան մասերում, մեկը մյու-  
սի յետեկից կազմակերպվեցին գյուղատնտեսա-  
կան արտելներ և շտապեցին միանալ կոռպերա-  
տիվների Միությանը:

Միության գլուխ եյին կանգնած ձեռնհաս  
և գործունյա մարդիկ, վորոնք և հաջողությամբ  
առաջ տարան գործը:

Միությունը կահավորեց, նոր մեքենաներ  
դրեց ձեռք բերված այդ գետնախնձոր-իերող գոր-  
ծարանի մեջ և այսպիսով ունեցավ կրախմալ  
յորացնող առաջին գործարանը, վորը պետք է  
աշխատեր ամբողջ գավառակի պետքերի համար:  
Բացի դրանից, այդ գործարանին կից նա մի շո-  
շոգեաղաց հիմնեց և սկսեց ընդարձակել իր շրջա-  
նառությունը:

Թե ինչպես եր ընթանում կոռպերացիայի զար-  
գացումը գավառակում, դա յերկում է հետեւյալ  
փոքրիկ աղյուսակից:

Ամեն 100 բնակչից	չեն մասնակցել
կոռպերացիայի մեջ	
մասնակցել են.	

1905 թ.	2	մարդ.	—	98	մարդ.
1912 »	36	»	—	64	»
1917 »	51	»	—	49	»
1920 »	88	»	—	12	»
1923 »	92	»	—	8	»

Ինչպես մենք տեսնում ենք այս տախտակից,  
1923 թ. համարյա թե ամբողջ գավառակը կոռ-  
պերացումի յեր յենթարկված:

Կոռպերացիան գյուղացիներին հնարավորու-  
թյուն տվեց գիտնական ազգոնոմների ոգնու-  
թյունն ստանալ՝ իրենց տնտեսությունը լավա-  
ցնելու համար:

Առանձին ուշադրություն եր դարձված գետանախնձորի մշակության վրա։ Յանքսի համար ամենալավ տեսակի գետնախնձոր ձեռք բերելով, զյուղացիք մի դեսյատինից ստանում եյին մինչև 2 հազար փութ գետնախնձոր։

Հիմա այդ գավառակը պահող պահպանողը, պլսավոր կերակրողը գետնախնձորն է։ Պատերազմի ժամանակ մեծ քանակությամբ բանջարեղեն եր ցանքում այնտեղ, վորից ստացված բերքը չորացվում եր՝ դրա համար հիմնված հատուկ գործարաններում և ապա մատակարարվում զորքի կարիքների համար։

Ավելացել ե կաթնատու անսասունների թիվը, կաթից այլ մթերքներ պատրաստելու համար բացվել են յուղ պատրաստող կոռպերատիվ փոքրիկ գործարաններ։ Զարգացել ե խոզաբուծությունը, ավելացել ե խոզերի թիվը, վորոնց կերակրում են՝ գործարաններում գետնախնձորի մշակումից ստացված մնացորդներով։

Թեև գավառակի ունեցած հողը չի ավելացել և նույնիսկ, ազգաբնակության աճման հետեւ վանքով, մեկ շնչին հասնող հողաբաժինը մինչև անգամ պակասել ե, բայց և այնպես այդ շըջանի զյուղացիները տնտեսապես այժմ շատ ավելի ապահովված են։

Կոռպերացիայի աճումով և տնտեսական վի-

ճակի բարելավումով, բնակչությունն այժմ շատ ավելի գիտակից ե, առույգ ու ձեռներեց։

1923 թվի սկզբին Շունգենի կոռպերատիվերի Միությունը կազմված եր տեղական բոլոր 7 գյուղատնտեսական կազմակերպություններից։ բաժնետերերի (փայտերերի)<sup>\*</sup>) ընդհանուր թիվը 2,432 մարդ եր։

Միությունն ունի այսուրի շոգեաղաց և 4 գործարան, այն ե՝ կրախմալ-չորացնող, կրախմալ-քերող, սղոցարան և կաշվի գործարան, բացի ելեքտրական կայարանից, վորի մասին հետո կխոսենք։

Միության մեջ մտնող բոլոր արտելները ուն իրենց գյուղատնտեսական ձեռնարկությունները, վորոնք ցրված են գավառակի գյուղերում։

Ահա այդ ցուցակը.

6 հատ «գետնախնձոր-քերող» գործարան.

3 » բանջարեղեն չորացնող »

4 » աղյուսի

4 » պանիր շինող »

1 » յուղ պատրաստող »

2 » ալրաղաց »

1 » սղոցարան »

Այսպիսով, կոռպերատիվ կազմակերպություն-

<sup>\*</sup>) Փայտերերը սովորաբար լինում և ընտանիքի մեծը

Ների մեջ միացած այս փոքրիկ գավառակի գյուղացիությունը ստեղծել է և հիմա ունի 25 հատ արդյունաբերական ձեռնարկ:

Շունգենցիք վաղուց են հասկացել, զոր գիտությունը—ուժ եւ մեծ ուշադրություն են դարձրել իրենց կրթության վրա:

Հիմա Շունգենի գավառակում կան լավ դըպրոցներ, գրադարան—ընթերցարաններ, ժողովրդական տներ, դրսից լրագրություն են ստացվում, տեղացիներն ունեն իրենց յերգեցիկ լավ խումբը, ունեն դրամատիքական և սպորտի (յերիտասարդների համար) խմբակներ:

Հիմա այնտեղ հարյուր մարդուց միայն հինգն են անգրագետ:

Թե տնտեսական և թե կուլտուրական աշխատանքների մեջ մեծ մասնակցություն ունի կուսակցական բժիջը, զոր համերաշխ և յեռանդուն աշխատանք ե տանում:

ԿՈՍՊԵՐԱՅԻԱՅԻ ՄԻՋՈՑՈՎ, ԴԵՊԻ  
ԵԼԵՎՏՐՈՖԻԿԱՅԻ Ա. Ա.

Շունգեն գավառակի Սամետ գյուղում ժողովրդական տուն եր շինված: 1918 թվին այդ տան լուսավորության համար մի փոքրիկ ելեկտրակայան եր սարքված:

Շունգեն այդ ժողովրդական տունը այրվեց հրդեհից, ելեկտրակայարանն ել հետը մոխիր դարձավ, բայց ելեկտրական լույսը մեծ տպավորություն եր թողել ժողովրդի վրա:

Յեկ յերբ անտեսական քայլքայման տարիներում գյուղը առանց նավթի մնաց և հարկ յեղավ նորից մարիսով (փայտի ցողիկներով). լուսավորել խրճիթը, շունգենցիք սկսեցին համառ կերպով հոգալ այն մասին, թե ինչպես անեն, զոր ելեկտրական լույս ունենան իրենց խրճիթներում:

Պետք եր, զոր մեկը այդ գործը սկսեր:

Այդ գործին ձեռնարկողներից մեկն ել նույն գավառակի գյուղացի Սարուզովն եր:

Յարի որով Սարուզովն իր զինվորական ծառայությունն անց եր կացըել նավատորմիղում, աշխատելով սուզանավի վրա, վորտեղ ևնա ծանոթացել եր ելեկտրականությանը:

1909 թվից նա աշխատում եր կոռակերացիայի մեջ:

Փոխանակ ամեն մի գյուղի համար առանձին փոքրիկ ելեկտրակայաններ հիմնելու (ինչպես այդ մտածում եյին անել վոմանք), Շունգենի կոռակերացիայի Սիության 1918 թվի ընդհանուր ժողովում Սարուզովն առաջարկեց ամբողջ գավառակի համար հիմնել մի մեծ ելեկտրակա-

յարան, այն հաշվով, վոր նա վոչ միայն լույս տար, այլ և շարժման մեջ դներ բոլոր՝ գետնախնձոր-քերող և այլ կոռպերատիվ գործարանները:

Սկզբում այդ առաջարկը շատերին յերեաց վորպես վոչ կարեռ և իրենց ուժից վեր ծախսեր պահանջող գործ։ Բայց յերբ Միության հրավերով յեկած մասնագետ ինժիներները ամենին ինչ հաշվեցին, պարզվեց, վոր այդպիսի մեծ, շրջանային կայարանը վառելիքի մեծ ինսայողություն կլիներ գործարանների համար, և շատ ավելի ձեռնտու, քան փոքրիկ կայարաններ հիմնելը։

1919 թվի փետրվար ամսին Շունգենի կոոպերատիվների Միության լիազորների ընդհանուր ժողովում վերջնականապես վճռվեց կառուցել շրջանային մեծ ելեքտրակայարան։

Ընտրվեց և կառուցող հանձնաժողով՝ Մտրուգովի նախագահությամբ։

Վերջինիս ամենամոտ և ջերմ աշխատակիցը ելեքտրականացման գործում, պյուղացի Շիշկիններ, Շունգենցի մի այլ կոռպերատոր։

Սկզբում Շունգենցիներին մեծ ոգնություն ցույց տվեց Մոսկվայում գործող՝ գետնախնձորի կոռպերացիայի կենտրոնական Միությունը՝ «Գետնախնձոր-Միություն» անունով։ Շունգենի կայա-

րանի ծրագիրը մշակեցին այդ Միության ինժեներներները. այդ Միությունը տվեց նաև անհրաժեշտ ծախսերի մի մասը։

Դ Ե Պ Ի Գ Ո Ւ Յ.

Վորոշվեց ելեքտրական կայարանը շինել Կարաբեյնիկ գյուղում, կատրոմկա գետակի ափին, Միության ալրաղացի և սղոցարանի ու կրախմալ-չորացնող գործարանի կողքին, վորպեսզի նրա շոգիից կարելի լիներ ոդտվել բանջարեղենները չորացնելու համար։

Հանձնաժողովը սկսեց կառուցման նյութերի պատրաստությունը տեսնել։ Նախ և առաջ ձեռք բերվեցին անհրաժեշտ թվով գերաններ, աղյուս ու ցեմենտ, ինչպես նաև ելեքտրական պիտույքներ։

Այդ աշխատանքները, ինչպես ասացինք, տեղի եյին ունենում մեր ամենամեծ քայլքայումի ժամանակ, յերբ փոխադրական միջոցները խանգարված եյին, յերկաթուղիների վրա իշխում եր տիֆը, վորից մեռավ Միության ինժեներներից մեկը։

Շատերին անմիտ գործ եր թվում այդ ծանրը որերին շինարարական աշխատանքներ սկըսելը։

Բայց Ստրուգովս ու Շիշկինը՝ համառ ու յեռանդուն մարդիկ եյին։ Նրանք չեյին ուղում ձեռները ծալել ու նստել. սիրով աշխատանքի կամ և յեռանդով կովում եյին դժվարությունների դեմ։

Իրենց այս աշխատանքների մեջ նրանք ամբողջ գավառակի աջակցությունն եյին զգում։ Թուկ չե՞ վոր. «գեղ կանգնի՝ գերան կկուրի», չե՞ վոր միացած ուժերով շատ բան կարելի յենել։

Յերբ պետք եր լինում ստացված մեքենաները կամ այլ նյութերը յերկաթագծից կլու, կառուցող հանձնաժողովը իսկույն այդ մասին իմաց եր տալիս գավառակում և ահա նրա այդ կոչին հազարավոր սայլակներ եյին հավաքվում, վորոնք առանց վճարի, տասնյակ հազարավոր փթերով բեռներ եյին տեղափոխում իրենց ելեքտրակայարանի համար։

Բայց գործը քանի գնում—դժվարանում եր, Բանը նրանումն եր, վոր արգելվեց մեքենաների և նրանց անհրաժեշտ պարագաների ազատ վաճառքը։ Ստանալու համար պետք եր ձեռք բերել հատուկ թույլտվություն, վորը մեծ դժվարությունների ու ձգձգումների հետ եր կապված։

Այդ աշխատանքի մեջ շունգենցիներին մեծ աջակցություն ցույց տվեց Խորհրդային Իշխա-

նությունը՝ տեղում, Կաստրամայում, նույնպես և Մոսկվայում։

Զանազան ձեռնարկություններ նրանց ձրի բաց թողին իրենց համար ավելորդ շոքեկաթսաներ, մեքենաներ և այլ սարք ու կարգ։

Այս բոլորը միմյանց քիչ եյին հարմարվում. հարկ եր լինում վորոշ փոփոխություններով մեկը մյուսին հարմարեցնել, շտկել ու միացնել։

Կայարանի կառուցման ժամանակ շունգենցիների մեջ միտք հղացավ ելեքտրականությունն ոգտագործել նաև վարի համար։ Այս միտքը խրախուսվեց թե նահանգական հողբաժնում և թե Մոսկվայում «Ելեքտրահող» բաժնում։

Այս հիմնարկությունները նույնպես ոգնության յեկան նրանց։

Յերբ սկսվեց ՆեՊ-ը և հիմնարկություններն անցան տնտեսության ինքնարդարացման յեղանակին, — այլև դադարեցին կայարանի համար անհրաժեշտ նյութեր և պարագաներ բաց թողնել, և այդ արտոնյալ դրությունը վերացվեց։

Պետք եր, վոր Կոռպերատիվերի Միությունն ինքն իր ուսերի վրա առներ կայարանի կառուցումն ավարտելու բոլոր ծախսերը։ Յեվ ահա այդ ժամանակ եր, վոր վրա հասավ անբերիությունը։

Շատերը հուսահատվեցին և գլուխները կորցրին։

Թվում եր թե սկսված գործը չպիտի ավարտի: Յեվ միայն Մարուգովի յերկաթե համառությունն ու Շիշկինի և բարեկամների մի փոքրիկ խմբակի անձնվեր յեռանդն եր, վոր բնակչության մեջ վառ պահեց հավատը դեպի այդ գործի հաջողությունը և գործը հասցրեց իր վախճանին:

Դեռ աշխատանքի վերջը չտեսած, գյուղացիք առաջուց սկսեցին Միության գանձարկղը մտցնել իրենցից ստացվելիք վարձը ելեքտրական լույսի համար: Բացի այդ, նրանք ինքնակամ հանձն առան վորոշ տուրք տալ կայարանի շինարարական աշխատանքներն ավարտելու համար:

Յեվ այսպես, պայքար մղելով խոչընդոտների ու կարիքների դեմ, դանդաղ, բայց համառ քայլերով շունդենցիներն իրենց մեծ գործն յերեք տարվա ընթացքում ստեղեցին՝ Խորհրդային Իշխանության մշտական աջակցությամբ:

ԱՄԵՆ ԻՆՉԻ ՎԵՐՋՆ Ե ԳՈՎԵԼԻ.

1923 թվի գարնանը կայարանն արդեն կառուցված եր և կահավորումն ավարտված:

Դա մի մեծ, գերանահյուս շինություն ե, կոռուկարատիվների Միության մյուս շենքերի կողքին կանգնած:

Կաթոսյատանը դրված ե Դյուրրի սթանդարտի յերկու մեծ կաթոսներ իրենց ջրխողովակներով: Այստեղ ստացված շողին շարժման մեջ ե դնում 500 ձիյու ուժ ունեցող մեքենան:

Շոգեմեքենան շարժման մեջ ե դնում ելեքտրոմեքենային: Այս լարման ուժով ելեքտրական եներգիան (ուժը) անցնելու յե գավառակի զանազան վայրերը ու այստեղ ևս գործարանների մեքենաները շարժման մեջ ե դնելու:

Ընդհամենը սկզբում պետք եր բավարարել 42 գյուղի (2,293 տնով) և 7 կոոպերատիվ գործարանների կարիքները, իսկ հետո արդեն ելեքտրոֆիկացիայի պիտի յենթարկվեյին նաև մնացած ձեռնարկությունները:

Յեվ վորովիետե ամառ ժամանակ գործարանները մեծ մասամբ չեն աշխատում, շունդենցիները վորոշեցին ելեքտրական ուժը ոգտագործել նաև վար անելիս:

Շունդենցիք և նրանց հարևանները ունեյին մի շարք խոտանեղեր, վորոնք, շնորհիվ անուշադրության, կոխոտված եյին անասունների կողմից և շատ վատ խոտաբերք եյին տալիս: Յեթե այն հողերը վարեն և խոտ ցանեն, ապա այդ տեղից ստացվող խոտի հունձը կավելանա հինգ անգամ:

Բայց անմիտ գործ եր այդ պնդացած հո-



ՀԱՅԱ-ԱՐՄ ՀՀ

Հ. Ա. ՄԱԿԱՐՅԱՆ

ղերը արորով կամ գութանով փիսրեցնելը:

Յեվ ահա վորոշում են ելեքտրական գութան բերել տալ: Համաձայն շունդենցիների հետ կապած պայմանագրի, այդ վարը հանձն առավ անել պետական «Ելեքտրա - գյուղ - շինարարություն» կոչված հիմնարկությունը, վորը և վարելատեղ ուղարկեց գութանն ու հատուկ մարդիկ՝ գործը ղեկավարելու համար:

Հունիսի 10-ին Շունդենի կայարանի հանդիսավոր բացումն եր:

Մոսկայից յեկել եյին Համառուսական Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի, Հողային Ժողովրդական Կոմիտարիատի, Կոռպերատիվ կենտրոնների և կուսակցական մարմինների ներկայացուցիչները, ինչպես և հարեւան շրջանների գյուղական ընկերությունների բազմաթիվ ներկայացուցիչները:

Ճառախոս-կոռպերատորները հատկապես շեշտում եյին այն հանդամանքը, թե ինչպիսի մեծ աջակցություն ե ցույց տվել շունդենցիներին Խորհրդային Խլանությունը՝ ելեքտրոֆիկացիայի գործում:

Ժողովը միաձայն վորոշեց Վ. Ի. Լենինին, վորապես համբավետության առաջին ելեքտրոֆիկատորին, վողջույնի հեռագիր ուղարկել և նրա անունով կոչել նոր բացված ելեքտրակայարանը:

Ստրուգովին և Շիշկինին կայարանի կառուցման վերաբերյալ նրանց կատարած յեռանդագին աշխատանքների համար, Շունդեն գավառակի բնակչությունը շնորհակալության ուղղերձ մատուցեց:

Այդ որը շունդենցոց դաշտի վրա ելեքտրական գութանը առաջին ակոսներն անցկացրեց:

Իրենց ձեռք բերած այս հաջողություններով շունդենցիք չեն բավականանում: Նրանք ելի նոր ծրագրներ ունին գլուխ բերելու:

Առաջները իրենց գործարաններում պատրաստած կրամամալը նրանք չորացնում եյին իրենց սարքած հատուկ գործարանում և ապա վաճառում: Հիմա նրանք վորոշեցին գավառակի մեջ իրենց սեփական գործարանը հիմնել, վորտեղ կարելի լիներ կրախմալից տեղն ու տեղը այլ նյութեր պատրաստել:

Շարապի պահպանման համար մեծ թվով տակառներ են պետք, իսկ տակառներ շինելու համար պետք ե շինվեն համապատասխան արհեստանոցներ: Շունդենցիները մտադիր են վերականգնել իրենց հին կավագործարանը, վորը մինչև այդ համարյա մոռացության եր մատնված

և, բացի այդ, զարկ տալ գալառակի այլ տնայնադրձական զբաղմունքներին:

Յեվ վորովհետև առաջին տարիների ընթացքում շունդենցոց ելեքտրական ուժը շատ շատ եր՝ համեմատած նրանց պետքերի հետ, ուստի նրանք վճռեցին այդ ուժի մի մասը թողնել հարեան գավառակներին:

Հիմա Շունդենի Միությունը անդամագրված է Համառուսական «Ելեքտրովարկ» կոչված փայտիրական ընկերությամբ: Վերջինիս նյութական աջակցությամբ շունդենցիները հույս ունին ել ավելի ընդարձակել իրենց շրջանի ելեքտրոֆիլացիան:

Իր այս աշխատանքներով Շունդենի գավառակը համոզեցուցիչ կերպով մեզ ցույց ետալիս, թե ինչպես կարելի յեւ և ինչպես պետք ետարի գյուղի ելեքտրոֆիլացիան:

Այս կենդանի որինակը առանձնապես նրանով եւ հետաքրքիր, վոր Շունդենի գավառակը գյուղացիական մանր տնտեսությունների սովորական շրջան եւ:

Այս գեղեցիկ որինակը մեզ պարզ ցույց ետալիս, թե ինչպես կոոպերացիայի միջոցով առաջ են գալիս ու զարգանում են կոոպերատիվ (խըմբական) ունակությունները, թե ինչպես ծավալվում ու զարգանում եւ համայնական տնտեսու-

թյունը՝ առանձին անդամների աշխատանքի արդյունքները վերամշակման յենթարկելով:

Ելեքտրականությունը ել ավելի ամուր ե կապում այս մանր տնտեսությունները միմյանց հետ:

Իսկ այն շահը, վոր ելեքտրավարն ետալիս, դա կհարկադրի գյուղացիներին, վոր նրանք աստիճանաբար նոր և կատարելագործված յեղանակներով ու միացած ուժերով ոգտագործեն իրենց հողը:

Յեվ այսպես, աստիճանաբար, քայլ առ քայլ, կոռպերացիայի յեվ ելեյտրոմիկացիայի միջոցով, գուղը կանցնի սոցիալիզմին:

### ՇՈՒՆԳԵՆՑԻՆԵՐԸ ՄԵՆԱԿ ԶԵՆ.

Վերջին տարիները մեր հանրապետության շատ տեղերում գիտակից գյուղացիությունն իր տնտեսությունը նոր հիմքերով ետալ տանում:

Մեծ են ելեքտրականության տված ոգուտներն այստեղ, ուր նա անցկացված եւ մի կողմից լույս ետալիս նա, մյուս կողմից՝ բազմատեսակ աշխատանքներ կատարում:

Որինակներն այնքան շատ են, վոր բոլորը թվել չես կարող:

Բերենք մի այդպիսի որինակ:

Բորովիչ և Վալդայ անուններով յերկու գավառներ կան Նովոգորովի նահանգում: Շատ հին ժամանակներից գյուղացիներն այստեղ իրենց ձմեռային զբաղմունքներն ունեն: Մեքենաներով գուլպաներ են գործում, ձեռնոցներ և այլ տաք հագուստներ: Բացի այդ, վաճառքի համար կոշիկներ են կարում եայլն:

Սրանից տաս տարի առաջ տնայնագործ գյուղացիները սկսեցին միանալ և աշխատակցական խմբակներ (արտելներ) կազմել, վորպեսզի միասին գնեն հում նյութերը (գործվածքների թելը, կաշի եայլն), մեքենաներն ու միասին վաճառեն իրենց պատրաստած ձեռագործները:

1914 թվին այդ արտելները միացան և այսպիսով կազմվեց «Բորովիչ-Վալդայի տնայնագործական յեկ զյուղատնտեսական Միուրյունը»:

Այս Միությունը չափազանց հաջող տարավ իր աշխատանքը. բարելավեց իր անդամների վիճակը և բնակչության վատահությունը ձեռք բերեց:

Միությանը և առանձին արտելներին կից կազմակերպվեցին մի քանի կոռպերատիվ-արդյունաբերական հիմնարկություններ, ալբաղացներ, սղոցարաններ և այլ գործարաններ:

Յերբ պատերազմի և քայլայման տարիներում նավթ չկար, առանձնապես շատ ծանրա-

ցավ տնայնագործների վիճակը, գորովհետև մութը հասնելուն պես՝ նրանք պետք ե թողնելին իրենց գործը, և զրկվելին մեծ յեկամուտից:

Միությունն ոգնության յեկավ իր անդամներին և իր ալբաղացների ու գործարանների կողքին սկսեց փոքրիկ ելեքտրակայաններ շինել, վորոնք մեծ ծախսեր չելին պահանջում վառելիքի կողմից, քանի վոր այդ կողմերում անտառներ շատ կան:

Գյուղացիների խրճիթներում պայծառ լույս սփուեցին առաջին լամպակները:

Տնայնագործները հիմա աշխատել սկսեցին նաև յերեկոները: Նրանց վաստակը համարյա կրկնապատկեց և, բացի դրանից, դեռ ելի ժամանակ ե մնում թե գիրք կարդալու և թե հասարակական գործերով զբաղվելու:

Ամեն մի այդպիսի փոքրիկ կայարան լուսավորում ե մի քանի գյուղեր, վորոնք գտնվում են նրանից 5—6 վերստի վրա:

Ահա այս ճանապարհով, Նովգորոդ նահանգի տնայնագործ գյուղացիները միանալով և իրենց Միությունը կազմելով, 1920 թվից մինչև 1923 թիվը, այսինքն յերեք տարվա ընթացքում, այդ խուլ գավառում 9 ելեքտրական կայաններ շինեցին, վորոնց լուսով 90 գյուղ լուսավորեցին:

Մինչև անգամ հիմա յել, յերբ համեմատա-

տաբար այնքան եժան և նավթը, նրանց լուսավորության ծախար ավել չի այն ծախսից, վորը նրանք կունենային, յեթե նավթ վառելին:

Իսկ վերջին ժամանակները նրանց Միությունն աշխատում եր փոքրիկ ելեքտրական շարժիչներ (մատորներ) հարմարեցնել տնայնագործական աշխատանքի մէքենաներին:

Հաստատ կարելի յե ասել, վոր այդ ել կհաջողվի նրանց և այն ժամանակ տնայնագործը այլևս ստիպված չի լինի որն ի բուն իր մեքենան դարձնելու. այդ աշխատանքը ելեքտրականությունը կանի, իսկ նա միայն իր ուղած գործը կանի՝ կանոնավոր աշխատող մեքենայի վրա:

«Տնայնագործ-Միությունը» մի այսպիսի ծրագիր ել ունի. ելեքտրական ուժ ստանալու համար ոգտվել հոսող գետերի ուժից և այդ նպատակով յերեք մեծ ջրային (հիդրոելեքտրական) ելեքտրոկայաւաններ շինել, — այն ժամանակ ելեքտրականությունը ել ավելի եժան կլինի, բոլոր աշխատանքների համար մատչելի կլինի:

ՈՐԻՆԱԿ ՎԵՐՅԵՔ ՇՈՒԳԵՆՑԻՆԵՐԻՑ ՑԵՎ  
ՎԱԼԴՅՈՅՑԻՆԵՐԻՑ.

Այն, ինչ վոր մենք պատմեցինք, հեքիաթ չե:  
Այս բոլորը յեղել ե ու լինում ե Խորհր-

դային Հանրապետության սահմաններում, այդ աշխատանքները կատարում են մեր ամենակազմակերպված և գիտակից գյուղացիները:

Դեռ Խորհուրդների 8-րդ Համագումարին Խորհրդագլուխին իշխանությունը անհրաժեշտ գտավ, վոր, ինչքան կարելի յե, շուտով ելեքտրոֆիկացիայի յենթարկվի մեր յերկիրը, այսինքն, պետք ե ձգտել, վոր յելեքտրականության միջոցով ամենուրեք հեշտանա բանվորի և գյուղացու աշխատանքը:

1921 թվին Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը մի ծրագիր հաստատեց այն մասին, թե ինչպես պետք ե աստիճանաբար, բայց համար քայլերով, մի շաբք տարիների ընթացքում, մեր հանրապետության մեջ ելեքտրականացման մեծ աշխատանքներ կատարվեն:

Ամեն մի վայրում, վորտեղ այդ հնարավոր ե, պետք ե հետեւ շունգենցիների և մյուս առաջավոր գյուղացիների որինակին և կոռպերացիայի, գիտության ու ելեքտրոֆիկացիայի միջոցով բարձրացնել ու բարելավել տնտեսությունը:

ԻՆՉԻՑ ՍԿՍԵԼ ԱՇԽԱՏԱՆՔԸ.

Գյուղական վայրերում ելեքտրոֆիկացիայի իրագործումը պետք ե կատարվի կոռպերացիայի

միջոցով։ Ամեն մի կոռպերատիվ տնտեսություն կարող ե իր վրա վերցնել այդ գործի նախաձեռնությունը։

Ամենից առաջ, պետք ե կոռպերատիվ ընկերությանը կից մի փոքրիկ հանձնաժողով կազմել բանիմաց և այդ գործի հաջողությանը հավատացող մարդկանցից։

Այս հանձնաժողովը պետք ե կատարի հետեւյալ նախապատրաստական աշխատանքը։

1) Իրենց գյուղի կամ գավառակի ելեքտրականացման ծրագրը կազմել և հաշվել, թե ինչ կնստի ելեքտրականություն անցկացնելը։

2) Պարզել, թե այդ բանի համար դրամական ինչ միջոցներ են պետք և ինչպես պետք ե այդ միջոցները ձեռք բերել։

3) Ժողովրդի մեջ ազիտացիա մղել ելեքտրոֆիկացիայի իրականացման նպատակներով։

Զպետք ե քաշվել ու վախճենով մոտենալ գործին, ասելով, թե անփորձ ենք։ Մենք բոլորս ել գործի ու աշխատանքի մեջ ենք սովորում։ Ճիշտ են ասել, վոր ով սրտանց կոչի մի գործի, նա յել գլուխ կբերի դա։

ԻՆՉՊԵ՞Ս ԿԱԶՄԵԼ ԾՐԱԳԻՐԸ.

Ելեքտրոֆիկացիայի լավ ծրագիր կարող ե կազմել միայն լավ մասնագետ ելեքտրիկը։

Յեթե հանձնաժողովի կազմի մեջ այդպիսին չկա, ապա պետք ե գտնել այդ մասնագետին և նրա աջակցությունն ստանալ։

Բոլոր նահանգական քաղաքներում և մինչև անգամ շատ զավառական քաղաքներում կան այդպիսի մասնագետներ։ Նրանք աշխատում են ժողովրդական տնտեսության խորհուրդների և պետական այլ հիմնարկությունների ու կոռպերատիվ կենտրոնների մեջ։ Շատ հաճախ նրանց կարելի յե գտնել հարեան գործարաններում։

Բայց անհրաժեշտ ե, վոր այս մասնագետներիկը մանրամասն տեղեկություններ ստանա այն վայրի մասին, վորտեղ ելեքտրականություն պիտի անցկացվի։

Նախապատրաստական աշխատանքներ տանող հանձնաժողովը պարտավոր ե հավաքել և մասնագետին տալ այդ բոլոր անհրաժեշտ տեղեկությունները։

Ամենից առաջ պետք ե պարզել, թե այդ վայրի կարիքների համար ելեքտրականության ինչ քանակություն կհարկավորվի։

Այս բանն իմանալու համար անհրաժեշտ ե պարզել, թե այդ շրջանում ինչ գյուղեր, ինչ գործարաններ, արհեստանոցներ և այլ բնակավայրեր կան, նրանցից յուրաքանչյուրը քանի տուն և բնակիչ ունի, բացի այդ, ինչ հեռավո-

բության վրա յեն գտնվում նրանք իրարից և  
այլն։ Այս բոլորը պետք են նշանակել այդ տեղի  
քարտեզի վրա։

Պետք են առև հաշվել, թե քանի լամպակներ  
կարելի կլինի անցկացնել խրճիթներում, քանի  
շարժիչ ե պետք, ինչ աշխատանքների համար,—  
գյուղատնտեսակա՞ն թե՞ տնայնագործական։ Բա-  
ցի այդ, անհրաժեշտ են նշանակել, թե բնակչու-  
թյունն ինչով ե զբաղվում, տարեկան ինչքան  
և ինչպիսի մթերքներ են հավաքվում և ինչ յե-  
ղանակներով են նրանք փերամշակվում։

Յեթե մոտերքում, 10 վերստից վոչ հեռու,  
ելեքտրակայարաններ կամ թե՝ նրանց լարերը  
(վորոնց միջոցով ելեքտրականությունն ե անց-  
նում մի տեղից մյուսը) կան, ապա պետք ե  
իմանալ, թե արդյո՞ք կարող են նրանք տվյալ  
շրջանի կարիքների համար ելեքտրականություն  
բաց թողնել և ի՞նչ քանակով ու ի՞նչ պայման-  
ներով։

Նույնպես և անհրաժեշտ ե տեղեկանալ մո-  
տակա արդյունաբերական ձեռնարկների վար-  
չություններից, թե կա՞ արդյոք հնարավորու-  
թյուն՝ ոգտվել նրանց շարժիչներից՝ ելեքտրա-  
կանություն ստանալու համար։

Առանձին ուշադրություն պետք ե դարձնել  
մոտակա գետակի, ինչպես և ջրաղացների վրա,

և պարզել, թե այդ գետակը վորքա՞ն ուժ կարող  
ե տալ և թե ինչպես պետք ե հարմար կերպով  
ոգտագործել նրա ուժը։

Յեթե այսպիսի հետազոտությունը ցույց  
կտա, վոր ելեքտրականություն ստանալու համար  
անհրաժեշտ ե սեփական ելեքտրակայան հիմնել,  
այդ գեղքում որ առաջ պետք ե վորոշել, թե  
վորն ե ձեռնտու, — նավթո՞վ բանող շարժիչներ  
պետք ե դնել, թե՝ շողիյով. իսկ այս հարցը պար-  
զելու համար անհրաժեշտ ե իմանալ, թե տվյալ  
տեղում ի՞նչպիսի վառելիք կա, ինչքա՞ն հեշտ ե  
այդ վառելիքը ստանալը կամ բերելը և ինչքա՞ն  
ծախս կնսածի դա։

Ծրագիրը կազմելու համար անհրաժեշտ տե-  
ղեկությունները պետք ե հավաքված լինեն այս  
յեղանակով։

### Տ Ե Ղ Ե Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Խ Ն Ե Ր

այս ցըշենի մասին, ուր յենքարդվում ե ելեկտրակա-  
նություն անցկացնել.

Հ Ա Ր Գ Ե Ր.

1. Վո՞ր գյուղերն եք ուզում ելեքտրոֆի-  
կացիայի յենթարկել\*), 2. Տվյալ շրջանում գլու-

\*.) Ցույց տալ նահանգը, գավառը, գավառակը, գյուղը, Տեր-  
քելքը տեղեկություններին կցել և այդ վայրի քարտեզը, վորտեղ-  
պետք են նշանակվեն բոլոր գյուղերը, խորհրդային տնտեսություն-  
ները և ազարակները ու նրանց մեջ գտնված տարածությունը  
մասշտաբով։

նվող գյուղերի, խորհրդային տնտեսությունների և ագրարակների թիվը։ 3. Բնակչության թիվը ամեն մի գյուղում առանձին վերցրած։ 4. Տնտերերի թիվը։ 5. Կովերի թիվը։ 6. Զիյերի թիվը։ 7. Մնացած մանր ու խոշոր անասունների թիվը։ 8. Շրջանում գտնված վարելահողի քանակը։ 9. Ինչպիսի հողեր կան (սկահող, վարելահող, կավախառն, ավազախառն և այլն)։ 10. Հողերը ի՞նչ քանակով են, ամենաշատը ի՞նչ խորությամբ հնարավոր ե վարել։ 11. Վո՞րքան հողեր ունեն խորհրդային տնտեսություններն ու ագրարակները և վո՞րքան հող կա ընդհանուր ոգտագործման մեջ։ 12. Մշակման սիստեմը ի՞նչ պիսին ե (յեռամյա, թե միամյա սերմափոխությամբ և այլն)։ 13. Վո՞րքան վարելահողեր կան, վորոնք մշակման են յենթարկվում բնակչության կողմից։ 14. Շրջանում վո՞րքան մարդագետիններ ու խոտհարքներ (չայիրներ) կան։ 15. Անտառները քանի՞ դեսյատին տարածություն են բռնում, ի՞նչ տեսակ ծառեր են բանում այստեղ։ 16. Կա՞ տորֆ, և քանի դեսյատին տարածությամբ։ 17. Տորֆաշերտի խորությունը։ 18. Այգիներն ու բանջարանոցները քա՞նի դեսյատին տարածություն են բռնում։ Զբարբի՞ յեն։ 19. Ի՞նչ տեսակի մրգեր ու բանջարեղեններ են հասնում այնտեղ։ 20. Սովորաբար ի՞նչ են

ցանում գյուղացիները (գարի, ցորեն, վարսակ) և միջին քանակով վո՞րքան բերք են ստանում դեսյատինից։ 21. Տեխնիքական ինչ բույսեր են մշակվում (կտավատ, կանեփ, ծխախոտ և այլն), քանի՞ դեսյատին են բռնում դրանք և ի՞նչպիսի բերք ելինում։ 22. Շրջանի սահմաններում գետ կա՞ գետի անունը։ 23. Գետի վրա կա՞ն ջրաղացներ։ 24. Շրջանի սահմաններում կա՞ն արդյոք շոգեշարժ և նավթով գործող ալրդացներ և յեթե կան, քանի՞ ձիու ուժ ունի նրանցից յուրաքանչյուրը։ 25. Շրջանում ինչ գործարաններ կան։ 26. Այդ գործարաններում ի՞նչ շարժիչներ են աշխատում։ 27. Այդ գործարաններն ունե՞ն արդյոք ելեքտրական մեքենաներ։ 28. Քա՞նի ձիու ուժ ունեն դրանք։ 29. Կա՞ն արդյոք սղոցարաններ։ 30. Շրջանում ի՞նչպիսի տնայնագործական զբաղմունքներ են զարգացած։ 31. Շրջանում քանի՞ տնայնագործներ են աշխատում։ 32. Տնայնագործները տարեկան քա՞նի որ են աշխատում և որական քանի՞ ժամ։ 33. Տարվա ընթացքում տնայնագործների շինած իրերի քանակը և դրանց արժեքը։ 34. Հողատակի ջուրը ի՞նչ խորության մեջ ե գտնվում։ Զբհորների խորությունը։ 35. Նավթի, ածուխի և տորֆի գինը այդ շրջանում։ 36. Կերոսինի գինը այդ շրջանում։ 37. Ամենամոտ ելեքտրակավարանները։

Այս ձեռվ հավաքած տեղեկությունները, ինչպես և այդ շրջանի քարտեզը կամ հատակագիծը հանձնաժողովը պետք է հանձնի մասնագետ ելեքտրիկին:

Այս տվյալների հետ ծանոթամարդով, վերջինս կարող է գաղափար կազմել տվյալ շրջանի տեսական դրության մասին: Սա շատ անհրաժեշտ է, քանի վոր առանց այդ տեղեկությունների հնարավոր չի ելեքտրականացման այնպիսի ծրագիր կազմել, վոր տեղական բնակչության համար և հարմար լինի և ձեռնտու:

Ի՞ն Զ Շ Ա Խ Ս Ե Պ Ա Հ Ա Ն Զ Ո Ւ Մ Ե Լ Ե Ք-  
Տ Ր Ո Ֆ Ի Կ Ա Ց Ի Ա Ն.

Առաջուց ասել, թե ինչքան կնստի այսինչ գյուղի կամ գավառակի ելեքտրոֆիկացիան, — շատ դժվար է. տնտեսական և բնական պայմաններից շատ բան է կախված:

Կարելի յե ասել, վոր ելեքտրոֆիկացիան եժան կնստի այն տեղերում, ուր մեծ մեծ գյուղեր կան և իրարից մոտ են:

Յեթե հնարավորություն կա ելեքտրակայարանը հիմնել վորևե գործարանի կամ այլ ձեռնարկության կից, ապա զգալի չափով պական կլինեն պահանջվելիք անհրաժեշտ ծախսերը:

Վորոշ պատկեր տալու համար մենք բերում ենք հետեւյալ որինակը.

Յեթե վորևե ձեռնարկության մեջ կա տաս ձիյուռ ուժ ունեցող շարժիչ (շոգիյով, սավթով կամ ջրով պտտվող), այդ գեպքում շատ հեշտ է այդ մեքենայի կողքին մի փոքրիկ ելեքտրո-մեքենա դնել, վորը կարող է լույս տալ 16 մոմանոց 300 ելեքտրական լամպակների, իսկ ցերեկ ժամանակ նա կարող է շարժման մեջ դնել 2—3 փոքրիկ շարժիչների, վորոնց ուժով մենք կարող ենք կալսել, երնել (թեղը քամուն տալ), գերաններ սղոցել, հարդ կտրտել, ջրհան մեքենան դարձնել, և այլն:

Այդպիսի մի ելեկտրական մեքենան իր պարագաներով Մոսկվայում արժի 900 ռուբլի:

Թելերն ու մեքենան կարգի գցելն ու աշխատանքները պետք է հաշվել առանձին:

Մեքենաներն ինչքան մեծ լինեն, այնքան համեմատաբար եժան կնստեն այդ աշխատանքները:

30—35 ձիյուռ ուժ ունեցող շարժիչի համար կարելի յե վերցնել դինամո-մեքենա, վորը մինչև 9000 լամպակների լույս կարող է տալ և մի քանի շարժիչներ դարձնել:

Այսպիսի մեքենայի գինը (իր բոլոր պարագաներով) մոտ 3000 ռուբլի յե:

Յերկլար պղնձաթելերի մեկ կիլոմետրը կարծենա մոտ 450 ռուբլի, չհաշված փայտե սյուներն ու սարքի գցելը:

Ելեքտրական մի լամպակի սարքելը (խրճիթի մեջ) արժե մոտ 4 ռուբլի, լամպակի արժեքն ել հետո:

Մոտիկ սյունից դեպի խրճիթը ելեքտրականություն անցկացնելը արժի մոտ 5 ռուբլի:

ԽՆՉՊԵՍ ԶԵՌՎ ԲԵՐԵԼ ԱՆՀՐԱԺԵՆՏ ՆՑՈՒԹԱԿԱՆ  
Մ Ի Զ Ո Ց Ն Ե Ր Ը.

Յերբ արդեն հայտնի յե ելեքտրոֆիկացիայի համար անհրաժեշտ դրամական միջոցների մոտավոր գումարը և թե ինչ կնսուի ելեքտրականությունը, — հանձնաժողովը պետք ե լուրջ քննության առնի այն հարցը, թե վորտեղից ինչ կարգով և ինչ ժամանակամիջոցով կարելի յե ստանալ այդ անհրաժեշտ միջոցները:

Մեր Խորհրդային Խշանությունը հիմա շատ ե աղքատ, ուստի և չի կարող զգալի ոգնություն ցույց տալ ելեքտրոֆիկացիայի գործին: Ամենից առաջ պետք ե սեփական ուժերի վրա հույս դնել և միայն այն ժամանակ կարելի յե մասնակի ոգնություն հուսալ, յերբ հավաքված կինեն սեփական թեև քիչ՝ միջոցները: Կողման կի ոգնությունը — պետական փոխառությունն

ե, վարկը և այլ նման ոժանդակությունները: Գործը հաջողությամբ առաջ տանելու համար հանձնաժողովը պետք ե բացատրի և պարզի բնակչությանը, թե նա ինչ ոգնություն է ստանալու ելեքտրականությունից: Փաստացի տվյալներով և թվերով ու որինակներով պետք ե ապացուցել, վոր առաջիկա ծախսերը հետո կրկնակի կծածկվեն այն ոգումաներից, վոր կունենան նրանց տնտեսությունները ելեքտրական ուժի շնորհիվ:

Անհրաժեշտ տեղեկությունները պետք ե վերցնել այն հաշիվսերից, վորոնցով այդ վայրի ելեքտրոֆիկացիայի ծրագիրն ու նախահաշիվսեն կազմված: Ավելի համոզեցուցիչ կինեն այն տեղեկությունները, վորոնք հարևան գյուղերի գործնական աշխատանքից են վերցված, վորտեղ արդեն՝ խելացիորեն և քիչ ծախսեր կատարելով՝ անց և կացրած ելեքտրականություն:

Շատ ոգտակար կինի՝ տեղական գրադարանի համար ելեքտրոֆիկացիայի վերաբերյալ հսարակորին չափ շատ գրքեր և սլակածներ բերել տալ, դասախոսություններ կարդալ և լուրջ ու մատչելի գրքերի խմբական ընթերցումներ կազմակերպել և այն:

Այս աշխատանքներին պետք ե կոչվեն տեղական ուսուցիչները, տեխնիկներն ու գյուղատն-

տեսները, ինչպես և այն անձինք, վորոնք ծառթ են ելեքտրականության հետ:

Այդ ուղղությամբ, վորքան լավ ու լայն տարվեն պրոպագանդան ու ազիտացիան, այնքան քնակչությունը սիրով կհամաձայնվի պահանջմելիք անհրաժեշտ ծախսերը հոգալ:

Նախապատրաստական այս աշխատանքները տանելուց հետո, կոռպերատիվի վարչությունը պետք է ելեքտրոֆիկացիայի հարցը գնի ընդհանուր ժողովի (կամ թե՝ լիազորների ժողովի) քննությանը: Այս ժողովը վերջնականապես վորոշում է ելեքտրոֆիկացիայի ծրագրի իրականացման հարցը տվյալ շրջանում:

Ժողովը պարտավոր է կոռպերատիվի միջոցներից մի վորոշ գումար հատկացնել ելեքտրոֆիկացիայի գործին և վորոշում հանել, վոր կոռպերատիվի յուրաքանչյուր անդամն այդնպատակով այսինչ ժամանակամիջոցում այսքան դրամ մուծի կառուցող հանձնաժողովի գանձարկղը: (Դրամի տեղ կարելի յե և մթերքներ—տեղում սահմանված գներով հաշված):

Այս ճանապարհով մի հատուկ դրամագլուխ կոյանա ելեքտրոֆիկացիայի համար: Հավաքած գումարները պետք է պահել բանկում կամ թե ինայողական դրամարկղում:

Ամբողջ գործը վարելու համար պետք է կո-

ոպերատիվի վարչությանը կից ընտրել մի փոքրիկ, բայց համերաշխ աշխատող կառուցող հանձնաժողով:

Իսկ յերբ արդեն պարզ է սեփական դրամագլուխ քանակը, այն ժամանակ կարելի յե վարկի հարցը բարձրացնել:

Պետք է դիմել տեղական վարկային հիմնարկություններին (վարկային ընկերություններին, բանկերին և այլն) և պարզել, թե ինչ չափով նրանք կարող են վարկ բանալ այդ գործի ավարտման համար:

Յեթե գործը ցույց կտա, վոր ելեքտրոֆիկացիայի համար շատ միջոցներ են պահանջվում և բնակչությունը չի կարող մի տարվա ընթացքում այդ միջոցները հավաքել, — չպետք է շվարել. շունդենցիներն ել մի տարվա ընթացքում չկարողացան ավարտել իրենց ծրագիրը:

Կարենը սկսելն է միայն: Առաջին տարին կարելի յե պատրաստել շինարարական նյութերը, փայտե սյուները, մեքենաները պատվիրել, անհրաժեշտ ելեքտրոտեխնիկական նյութերը գնել և այլն, իսկ հաջորդ տարին արդեն անցնել շինարարական բուն աշխատանքներին:

Թո՛ղ ավարտված լինի ծրագրի մի մասը միայն, բոլորը կտեսնեն, վոր արդեն մոտ են նպատակին: Ահա այս հանգամանքը կվոգմորի

գյուղացիներին, նրանց հավատ կներշնչի, ակս-  
ված գործի հաջողությունը կապահովի և կոդ-  
նի՝ անհրաժեշտ միջոցները շռւտ, հավաքելուն:

Հիշենք, վոր ելեքտրականությունը մեզ վոչ  
միայն լույս ե տալիս, այլ և ուժ (վորով մենք  
կարող ենք ամեն տեսակի գործ անել), վորն այն-  
քան հեշտացնում ե բնակչության աշխատանքը  
և այն մի քանի անգամ ավելի արտադրական  
դարձնում:

Աշխատավորների համար մեր յերկիրը մի  
գրախտ կդառնա. Ելեքտրոֆիկացիան մի ան-  
հրաժեշտ աստիճան ե՝ այդ լավ որերին հասնելու  
համար:

ՈԽՇՔԴԵՑԻՆ ՍԼՑ. ՀԵՆՐԻՎԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԻԹՅԱՆ  
ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԿԵՆՏՈՆԿՑԱՆ ՀՐԵՍԵՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ  
Հայկական սեկցիա  
Մոսկվա, Նիկոլսկի փող. և 10.

- Ի. ԱՏՈԼԻՆ.—Գյուղացիական հարց: Գինը 50 կոպ.  
Ի. ԱՏՈԼԻՆ.—Ազգային հարցը: (Տպագրվում է):  
Վ. ԼԵՆԻՆ.—Պատգամներ յերիտասարդության. գինը 15 կ.  
Ն. ԿՐՈՒՊԿՈՎՅԱՆ.—Լենինի պատգամները ժողովրդական  
լուսավորության մասին: Գինը 20 կ.  
Զ. ՅԱՎՈՐՍԿՈՅԱՆ.—Կլարա Ֆենին (կենսագր.): Գինը 10 կ.  
Ն. ՏՈՒՐՅԱԿՈՒՆՈՎ.—Ազգային հարցը յեվ դպրոցը: Գի-  
նը 40 կ.:  
Բ. ԺԱՎՈՐՈՍԿՈՎ.—Հասարակագիտությունը I ասինա-  
նի դպրոցում:  
Ն. ԵԼԻԶՈՐՈՎ.—Ի՞նչ վորուեց կուսակցության XIX հա-  
մագումարը:  
Ա. ԴՄԻՏՐՅԵՎՈՒ.—Տգիտությունը յեվ սնամակատությու-  
նը: Գինը 15 կոպ.

- Մ. ԼԻՎԵՆՍԿԻ.—Գյուղաճնեսական հարկ: Գինը 20 կ.  
ՅԵՍԻՊՈՎ.—Գյուղացիության պահանջները յեվ խորհր-  
դային դպրոցի ծրագրները: Գինը 12 կոպ.  
Պ. ՎԼՈՍՈՎ.—Հողի մօակումբ յերաշի ժամանակ: Գի-  
նը 40 կոպ.  
Լ. ՅՈԶԵՖՈՎԻՉ.—Գյուղ կանգնի գերան կիուրի (կոռավ-  
րացիան գյուղում): Գինը 30 կոպ.  
Ի. ՊՈԴՅՈՎՈՎՈՎԻ.—Սասծու կամքը թե՞ գյուղաճնեսա-  
կան գիտությունը:  
ԳՈՒԴԼԻՆ.—Փորող փայտից մինչեվ տրակտոր:  
Ա. ԿՐՈՎԶԵՆԿՈ.—Թէ ինչպես կարելի յե գյուղում ելեկ-  
տրականություն անցկացնել:  
Ո. ՍԿՈՄՈՐՈԽՈՎ.—Առաջին ոգնությունը հիվանդ կեն-  
դանուն:

- Ա. ԲՐԱՆՍԲՈՒՐԳ.—Ընտանի կենդանիների վարակիչ հի-  
մանդուրյունները:
- Ա. ՄԵՄԱՆՎԻ. —Թոփախ. (պատկերազարդ):
- Բ. ԳԻՆՍԲՈՒՐԳ.—Յերեխանների վարակիչ հիվանդուրյուն-  
ները:
- Վ. ԲՐՈՆՆԵՐ. — Գլեներական ախտեր. (պատկ.) Գինը 25 կ.
- Ս. ՍՊԵՐՆԱՍԿԻ. — Մոր ալբբենարանը. (պատկ.):
- Դ. ՄԵՄԵԿԻՆ. — Արեվիր, եռա վորդինները լեզ քսոներ:  
(Տպագր.):
- Ա. ՌՈՒԲԻՆՇՏԵՅՆ. — Ռոդսից մինչեվ այերոպլան: (Տպ.
- Վ. ՅԱԶՎԻՑԿԻՅ. — Մարդկային բնակարանի պատմուր.:
- Մ. ԳՈՐԿԻՅ. — Յերիտասարդ գրողը: Մարդի:
- Ա. ՍԵՐԱՖԻՄՈՎԻՉ. — Պատմվածքներ:
- Դ. ՄԱՄԻՆ-ՍԻԲԻՐՅՈՎ. — Մոծակի լեզ արջի մասին: (Պատ-  
կերազարդ): Գինը 13 կոպ.:
- Պ. ՈՐԼՈՎ. ՅՅ. — Ճամբորդուրյուն այերոպլանով: (Պատկե-  
րազարդ): Գինը 20 կոպեկ:
- Պ. ՈՐԼՈՎ. ՅՅ. — Քիմիկոս Կուզկան: (Պատկերազարդ): Գի-  
նը 25 կոպեկ:
- Ա. ԿՈՒՊՐԻՆ. — Յերկրի խորենում: (Պատկերազարդ): Գի-  
նը 15 կոպեկ:
- Ա. ՆԵՎԵՐՈՎ. — Խճչախ եյին ապրում տիկնիկները լել  
ինչ արեց արճինք զինվորը: (Պատկերազարդ): Գինը  
16 կոպ.:
- Ա. ԿՐԱՎԶԵԱԿՈ. — Խճչախ Սաֆոն կարմիր բանկային  
դարձավ: Գինը 35 կոպ.:
- Ֆ. ՖՈԲՍ. — Մինիստ մեկ ժամով: (Պատկերազարդ): Գինը  
20 կոպեկ:
- Յ. ՌՈԴԻՆ. — Պիոներ, պահպանից առողջուրյունդ: Գինը  
10 կոպեկ:
- ՈՒԺՈՎ. — Պատանի պիոներ: (Ժողովածու): (Տպագր.):

Դիմել Կենտրոնացածրական Ազգային Կոմիտե Խորհրդական 10.

Կամ Հայաստանի Պատմական Ազգային Կոմիտե:



ՀՀ Ազգային գրադարան



NL0281682

ԳԻԱ 20 ԿՈՐԵԿ

11115  
Институт  
Востоковедения  
Академии Наук  
СССР



---

**А. КРАВЧЕНКО**

**Как крестьяне  
устраивают у себя  
электричество**

---

На армянском яз.

Центральное Издательство Народов Союза С. С. Р.

Москва

Никольская 10.